

4839

4838

Or. d 475.282

№ 6

# ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՎԱՏԱՀՈՒԹԻՒՆ

ՈՒ ԳԱՅԵԼՔ

„Բ Ա Ր Ի Լ Ո Ւ Ր Ի“

ՀՐԵՍԵԲԵԿՈՒԹԻՒՆ

БЕЗОПАСНОСТЬ, ДОСТОВЕРНОСТЬ  
И  
НАСЛАЖДЕНИЕ.

ԲԱԴՈՒ

Տպագր. Ա. Մ. Թամայեանցի և Լ. Գ. Միքայեանցի  
1908

Тип. А. Н. Тараева и Л. Д. Мирзаянцъ  
Баку.

24  
14-67

24

Ա. 67

Արմ.

2-55212

Տ. 838  
1 OCT 2009  
Տ. 838

## ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ, ՎԱՏԱՀՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԱՅԵԼՔ

Թէ այս առղերի գրողը և թէ կարգացողը՝  
մենք ամենքս էլ ճանապարհորդներ ենք, զնում  
ենք այս աշխարհից դէպի յաւիտենականու-  
թիւն, և մեղանից ոչ մէկն էլ չը դիտէ, թէ երբ  
պիտի վերջացնէ այդ ճանապարհորդութիւնը և  
հասնէ նպատակին: Շատ կարենոր է հարցնել և  
իմանալ, թէ որտեղ կը հասցնէ մեզ այդ ճանա-  
պարհորդութիւնը: Սակայն այդ հարցի ուղիղ  
պատասխանը գտնելու համար առաջ պէտք է  
պատասխանել մի ուրիշ հարցի, այսինքն, թէ  
որ կարգով ենք մենք ճանապարհորդում:— Երեք  
կարգեր կան, որոնցով մարդիկ ճանապարհոր-  
դում են:

Առաջի կարգի մէջ գտնւում են այն մար-  
դիկը, որոնք փրկւած են և զիտեն իրանց փրր-  
կւած լինելը:

Երկրորդ կարգի մէջ նրանք, որոնք չը դի-  
տեն՝ իրանք փրկւած են, թէ ոչ, բայց և շատ  
կուգէին իմանալ այդ:

Վերջապէս երրորդ կարգի մէջ գտնւում են  
այն մարդիկը, որոնք ոչ թէ միայն փրկւած  
չեն, այլ և բոլորովին անտարբեր են իրանց հոգի-

**ԱՀԲ. № 21140**

— 2 —

ների յաւիտենական փրկութեան վերաբերեալ:  
 Իւրաքանչիւր մարդ ճանապարհորդում է  
 այդ կարգերից որևէ մէկով և չափազանց կարե-  
 ւոր է իմանալ, թէ ո՞ր մէկով: Երբ որ խնդիրը  
 վերաբերում է յաւիտենականութեան, չի կա-  
 րելի անտարբեր լինել. այդպէս մի ծանրակշիռ  
 խնդիրում անտարբեր գտնւելը՝ ամենամեծ յիմա-  
 րութիւնը կը լինէր: Բայց աւաղ, քանի միլիօ-  
 նաւոր մարդիկ անդադար աշխատում են և ոչ  
 մի ջանք չեն ինայում, որպէս զի առաջ տա-  
 նեն իրանց երկրաւոր շահերը, մինչդեռ նոյն  
 մարդիկը կարծես թէ զարկւած լինեն կոյրու-  
 թիւնով՝ իրանց յաւիտենական բարելաւութեան  
 վերաբերող բաներում: Զը նայած Աստուածոյ  
 անհուն սիրոյն դէպի մեղաւոր մարդը, որ յայտ-  
 նւեցաւ Գողգոթայում. չը նայած թէ Աստուած  
 շատ անդամներ յայտնել է իր ունեցած առե-  
 լութիւնը մեղքի դէմ. չը նայած այդ կեանքից  
 յետոյ սպառնացող գատաստանի անաւորութեա-  
 նը, մարդը շտապում է դէպի իր ճանապարհի  
 սարսափելի վախճանին՝ ամենամեծ անհոգու-  
 թեամբ, իբր թէ բոլորովին գոյութիւն չունենա-  
 յին ոչ Աստուած, ոչ մահ, ոչ գատաստան, ոչ  
 երկինք ոչ էլ դժոխք: Աիրելի ընթերցող, մի  
 գուցէ դու ևս այդ կարգի մարդկանցից ես: Եթէ  
 այդպէս է, ոհ թէ Աստուած հէնց այժմ ողոր-



4839-67

— 3 —

մէր քեզ, և բաց անէր քո աչքերդ՝ այս տողե-  
 րը կարդալու միջոցին, որպէս զի դու ճանաչէ-  
 իր քո վտանգաւոր գրութիւնդ և տեսնէիր թէ  
 դու կանգնած ես յաւիտենական և անսահման  
 թշւառութեան շէմքում:

Թէկուզ հաւատաս թէ չը հաւատաս՝ քո  
 գրութիւնը իսկապէս յուսահատական է: Ո՞հ,  
 այլես մի հեռացնիր քեզանից յաւիտենականու-  
 թեան միտքը: Հոգիների մեծ թշնամին, «գող  
 ու աւազակը» աշխատում է խաբել քեզ, որպէս  
 զի յետաձգես այդ չափազանց լուրջ գործը:  
 Լաւ է ասում սպանիական առածը, թէ «Յետոյ  
 մի անդամ» ճանապարհը տանում է դէպի «Ոչ  
 երբէք» քաղաքը: Դա շատ ճշմարիտ է, և ես  
 խնդրում եմ, որ դու այլես չը շարունակես այդ  
 ճանապարհը, որովհետև «Այսօր է ընդունելի  
 ժամանակը, այսօր է փրկութեան օրը»:

Գուցէ դու ինձ պատասխանես և ասես.  
 «Ես անտարբեր չեմ իմ հոգիիս փրկութեան վե-  
 րաբերեալ բաներում: Ընդհակառակը, ես մինչեւ  
 անդամ շատ հոգս եմ անում դրա համար. միայն  
 թէ ես չունիմ վստահութիւն, չը զիտեմ փրր-  
 կւած եմ թէ ոչ. կարծ ասած, ես ճանապարհոր-  
 դում եմ երկրորդ կարգով»:

Ուրեմն լիիր, բարեկամ, իհարկէ քո գրու-  
 թիւնը տարբեր է անհոգ մարդի գրութիւնից,

ստկայն այդ երկուսի հիմն էլ նոյնն է: Թէ անտարբերութիւնը և թէ անվատահութիւնը՝ երկուսն էլ բուժում են նոյն հողի վրա, որը կոչւում է «անհաւատութիւն»: Անտարբեր մարդը չի հաւատում մարդու մեղաւոր և ապականված լինելուն, և վատահութիւն չունեցողը չի հաւատում փրկութեան այն զօրաւոր միջոցին, որ Աստուած տւել է մարդկանց համար: Ես շատ լաւ հասկանում եմ քո ցաւդ և համոզւած եմ, որ եթէ դու աւելի լուրջ վերաբերվես այդ վերին աստիճանի կարեսը խնդիրին, նոյնքան աւելի ևս փափագ կ'ունենաս վստահութիւն ձեռք բերելու քո յաւիտենական փրկութեան վերաբերեալ: «Որսինեակ ինչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհն ստանայ և իր անձը կորցնէ»: (Մատթ. ۲۶): Մի մարդ որ մոլորվել է և յոգնած ու սոված հասել մի տեղ, ուր ճանապարհը բաժանվում է երկուսի, միթէ նա կը բաւականանայ, եթէ ասեն, թէ գուցէ այն երկու ճանապարհից մէկը կը հասցնէ նրան իր նպատակին: Ոչ, այլ նա պիտի հաստատ իմանայ այդ: Նոյնպէս է և այն մարդի գրութիւնը, որ արթնանում և սարսափելով տեսնում է, թէ ինքը գտնուում է լայն ճանապարհի վրա, որը գէպի կորուսան է տանում: Օգուտ չունի, եթէ մէկը ցոյց տար նրան մի ճանապարհ, որով կա-

րելի էր յուսալ, թէ գուցէ ինքը աղատվէր կորսափց: Նա չի կարող հանգստանալ՝ մինչև հաստատ չիմանայ, թէ ինքը գանվում է այն ճանապարհի վրա, որը տանում է գէպի յաւիտենական կեանքը:

Ես շատ կը ցանկանայի որ իմ ամեն ընթերցողներս ունենային վստահութիւն իրանց փրկութեան վերաբերեալ. այդ պատճառով հարկաւոր եմ համարում դարձնել նրանց ուշադրութիւնը երեք բաների վրա և մանրամանօրէն քննել այդ՝ Սուրբ Հոգոյ առաջնորդութիւնով և Աստուծոյ խօսքի լոյսով: Ահա երեք բաները.

1. Փրկութեան ճանապարհը: (Փորձ. Ժզ, 17):
2. Փրկութեան գիտութիւնը: (Ղուկ. ա, 77):
3. Փրկութեան ուրախութիւնը: (Սաղմ. ծա, 12):

Մենք կը տեսնենք, թէ չը նայած որ այդ երեքը ներքին կապ ունեն միմիանց հետ, սակայն գրանցից ամեն մէկը ունի իր առանձին հիմքը, այնպէս որ շատ կարելի է, մի մարդ ճանաչէ փրկութեան ճանապարհը, բայց վստահութիւն չունենայ թէ ինքը փրկւած է. և յետոյ, մի մարդ կարող է հաստատ իմանալ իր փրկւած լինելը, բայց չունենալ ամեն ժամանակ այն ուրախութիւնը, որը պէտք է լինէր այդ վստահութեան հետ միասին: Նախ և առաջ դարձնենք մեր

ուշագրութիւնը փրկութեան ճանապարհի վրայ:

Ելից զրքի ժգ. զլխում կայ մի օրինակ, որը պարզ կերպով ցոյց է տալիս փրկութեան ճանապարհը: Թող ընթերցողը բաց անէ Աստուածաշունչը և ուշագրութեամբ կարդա 13 համարը. «Եւ էշի ամեն առաջինեկը մի ոչխորով փրկես, և եթէ չը փրկես, նորա վիզը կոռորիր. և քո որդիների մէջ մարդի ամեն առաջինեկը պիտի փրկես»: Հիմա կամենում եմ ընթերցողի առաջին դնել մի տեսարան, որը կարող է տեղի ունեցած լինել 3000 տարի սրանից առաջ: Երկու մարդիկ կանգնել են և շատ տաք խօսակցութիւն ունեն իրարու հետ: Մօտենանք և լսենք թէ ինչ են խօսում նրանք: Այդ երկուսի կենդանի շարժումներից կարելի է եզրակացնել, թէ նրանց խօսակցութիւնը շատ կարեոր խնդիրի մասին է, և դժւար չէ գուշակել, թէ նրանց խօսակցութեան առարկան այն փոքրիկ էշն է, որ դողդողարով կանգնել է երկուսի մէջաւեղը:

«Ես եկել եմ», ասում է աղքատ իսրայէլացին, «որ իմանամ, թէ արդեօք չի կարելի, որ այս մի անգամը բացառութիւն անէք ինձ համար: Այս փոքրիկ խեղճ կենդանին իմ էշի առաջինեկն է, և թէպէտ ես շատ լաւ գիտեմ, թէ ինչ է ասում Աստուածոյ օրէնքը դրա վերա-

բերեալ, սակայն և այնպէս, ես յոյս ունիմ, որ Աստուած ինձ կը խղճայ և չի պահանջիլ ինձանից այդ կենդանիի կեանքը: Ես աղքատ մարդ եմ, և ճնարաւորութիւն չունեմ որ փրկեմ դրան»:

«Բայց», պատասխանում է քահանան վճռական ձայնով, «Տիրոջ օրէնքը խօսում է շատ պարզ և որոշ, «Էշի ամեն առաջինեկը մի ոչխարով փրկես, և եթէ չը փրկես, նորա վիզը կոռորիր: — Ո՞րտեղ է գտոր»:

«Ես գտո չունիմ»:

«Ուրեմն գնա, գնիր մի գառ և գարձեալ եկ. թէ ոչ, պէտք է էշի վիզը կոռորել, Կամ գառը պէտք է մեռնէ կամ էշը, ուրիշ կերպ չի կարելի»:

«Աւաղ, իմ ամեն յոյսերս ոչինչ եղան», ողբում է խեղճ մարդը լալագին ձայնով. «Ես կարողութիւն չունիմ գառը գնելու»:

Այդ միջոցին մօտենում է նրանց մի երրորդ անձնաւորութիւն, մի ծերունի իսրայէլացի: Նա լսում է խեղճ մարդի յուսահատ ողբի ձայնը: Մի բոպէ խորասուզւում է մտածողութեան մէջ և յետոյ գառնում այդ մարդին և քաղցրութեամբ ասում. «Քաջացիր, բարեկամ, ես կ'օգնեմ քեզ: Ես ունիմ տանս մէջ մի փոքրիկ անարատ գառնուկ: Թէպէտ այդ գառնուկը իմ տանս լինողների ամենի ուրախութիւնն է, և ինձ համար էլ շատ սիրելի և թանկագին, բայց

և այնողէս՝ իսկոյն կը գնամ, կը բերեմ այդ գառնուկը և կը զոհեմ քո էշի փոխարէն»։ Ասում է և շտապով հեռանում, քիչ վերջը վերադանում է և բերում իր հետ խոստացած գառնուկը։ Քահանան ընդունում է զոհը, մորթում է, ու սեղանի վրա այլում նրան։ Խեղձ մարզը առանց մի խօսք անգամ ասելու կանդնում է և ապշած նայում։ Քահանան՝ երբ ամեն ինչ կատարում վերջացնում է, գիմում է մարդին և ասում. «Հիմա կարող ես հանգիստ վեր առնել էշտ և տանել տուն, այլևս պէտք չէ կոտրել նրա վիզը, որովհետեւ դրա փոխարէն զառը մորթվեցաւ և հետեւքար էշը իրաւունք ունի ազատ լինելու մահից և ողջ մնալու։ Դրա համար պէտք է շնորհակալ լինես այդ բարեկամիցդ»։

Սիրելի ընթերցող, չես տեսնում, թէ սա մի յարմար օրինակ է մեղաւորի փրկութեան։ Քո մեղքերիդ պատճառով՝ արդար դատաստանը հասել էր քեզ վրա, դու պիտի մեսնէիր և յաւլանաս կորչէիր։ Այս դատաստանից պրծնելու համար մի հատ միջոց ու հսարաւորութիւն կար, այսինքն, որ քո տեղակ մի ուրիշը տար իր անձը, որ զանվէր մի փոխանորդ, որին և Աստուած հաւանէր։ Բայց որտեղից կարող էիր դու զանել այդպէս մէկը։ Դու ևս ճիշտ նոյն դրութեան մէջ ես զանվում, ինչպէս և այն աղքատ իսրա-

յէլացին։ Դու ոչ մի ժամանակ չես կարող ձեռ բերել Աստուծոյ պահանջած զառնուկը, Բայց լսիր թէ Աստուած ինչ է արել, որպէս զի հնարաւոր լինէր քո փրկութիւնը։ Նա տեսել է իր համար իր Գառը, իր միածին սիրելի Որդին՝ անբիծ ու անարատ»։ «Ահա, Աստուծոյ Գառը», ասեց Յովհաննէսը իր աշակերտաներին, երբ տեսաւ Տէր Յիսուսին. «Ահա Աստուծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհքի մեղքը»։

Այդ Յիսուսը գնաց Գողգոթա՝ մորթվելու տարւող ոչխարի պէս, և չարչարվեցաւ այնտեղ մեր մեղքերի համար, «Այն Արդարն անարդարների համար, որ մեզ մօտեցնէ Աստուծուն»։ (Ա. Պետր. դ, 18)։ «Նա մատնուեցաւ մեր յանցանաց համար, և յարութիւն առաւմեզ արդարացնելու համար»։ (Հոռմ. դ, 25)։ Եւ նիմտ Աստուած արդարացնում է ամբարիշտ մեղաւորին, որ հաւատում է Յիսուսին, (Հոռմ. դ, 26) և միենոյն ժամանակ դրանով չի խափանվում մի ամենափոքր նշանագիր անգամ նրա արդար և սուրբ պահանջներից։ Յաւիտեան շնորհակալութիւն լինի Աստուծոյն՝ այդպէս մի Փրկչի և այդպէս մի փրկութեան համար։ Երբ մի մարդ ճշմարտապէս հաւատում է Աստուծոյ Որդուն, ապա Քրիստոսի բերած զոհը համարվում է նրան՝ իր լիովին արժէքով, իբր թէ մարդն ին-

քը կատարած լինէր այդ գործը։ Աստուած այլ-  
և չի տեսնում հաւատացողին նրա հին և ա-  
պականված զբութիւնում, այլ տեսնում է նրան  
Քրիստոսի անձնաւորութեան լիովին արժանա-  
ւորութիւնով։ Աստուծոյ փրկութեան ծրագիրը  
խսկապէս Աստուածային է և Աստուածավայել-  
դա բաւականացնում է նրա սիրող սրտին, փա-  
ռաւորում նրա Որդիին և տալիս է յաւիահնա-  
կան ապահովութիւն մեղաւորին։ Օրհնեալ է  
Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը,  
որ ուզարկել է իր Միածնին և Սիրելիին, որպէս  
զի կատարէ փրկութեան մեծ գործը, և ամեն  
բան այնպէս լաւ կարգագրել է, որ քեզ պէս և  
ինձ պէս խեղճ մեղաւոր արարածներս, հաւա-  
տալով նրան, ոչ միայն մասնակից ենք լինում  
այստեղ ամենասառատ օրհնութիւնների, այլ և  
ամեն յաւիտեաններում քաղցր հաղորդակցու-  
թեան մէջ պիտի ապրենք Օրհնողի իրան հետ:  
«Մեծացրէք ինձ հետ Տիրոջը, թող իրար հետ  
բարձրացնենք նորա անունը»։ (Սաղմ. լդ, 3)։

Գուցէ դու ասես ինձ. «Ես արդէն բոլորս  
վին ձեռ եմ քաշել ինքս ինձանից և իմ գործե-  
րից և իմ յոյսս միմիայն Քրիստոսի և նրա կա-  
տարած գործի վրա է. սակայն չունիմ կատա-  
րեալ կատահութիւն և չեմ կարող հասաւատ ա-  
սել, թէ ես փրկւած եմ։ Այսօր զգում եմ ին-

քըս ինձ շատ բաղդաւոր, և ուրախանում եմ,  
թէ Աստուած ընդունել է ինձ, որովհետեւ հաւա-  
տացել եմ Յիսուսին և նրա հեղված արիւնին,  
իսկ վաղը արդէն իմ ուրախութիւնս փոխվում  
է արտամութեան և երկմտութեան։ Ի՞նչից կա-  
րող է առաջ գալ այդ»։

Այդ քո հարցին կը պատասխանեմ ես մի  
ուրիշ հարցով. «Արդեօք լսել ես, որ մի նաւա-  
պետ վեր առնէր իր նաւի խարիսխը և գցէր  
հէնց նաւի մէջ, մտածելով, թէ դա է ամենից ա-  
պահով տեղը խարիսխի համար»։ Ոչ երբէք, եթէ  
մի նաւապետ այդպէս բան անելու լինի, իմա-  
ցիր որ նրա խելքը գուտիր չէ, նա խելագարվել  
է։ Նաւապետը միշտ նաւից գուրս է գցում խա-  
րիսխը, ծովի մէջը։ Հասկանում ես այդ իմ  
օրինակի միտքը։ Դու պարզ գիտես, թէ մի-  
միայն Քրիստոսի մահն է, որ կարող է ապա-  
հովացնել մարդին յաւիտեանական գատասաանից,  
բայց միենոյն ժամանակ դու կարծում ես, թէ  
քո զգացմունքները կարող էին քեզ վստահու-  
թիւն տալ։ Փոխանակ դուրս նայելու, նայում  
ես քո սրտին, և ի՞նչ է լինում հետեւնքը։ Այս  
որ, այսօր տեսնում ես քո մէջ՝ փրկված մար-  
դին վայել զգացմունքներ, և ուրախ ու բաղդա-  
ւոր ես լինում, իսկ վաղը չքանում են զգաց-  
մունքները և դու ընկնում ես ամենամեծ ան-

հանդասութեան և նեղութեան մէջ, ինչպէս մի նաւ, որ ալեկոծութեան մէջ է գանգում փոթոքիկի պատճառով։ Հիմա գալիս է մեր խորհրդակցութեան երկրորդ գլխաւոր առարկան, այսինքն «Փրկութեան գիտութիւնը»։

Դարձեալ խնդրում եմ ընթերցողին, որ նա իր ձեռքն առնէ Աստուծոյ խօսքը և բաց անէ Յովհաննու առաջի թուղթի հինգերորդ գլուխը։ Այստեղ կայ մի համար, որ պարզ ցոյց է տալիս, թէ Աստուծած ինչպէս է տալիս մարդուն փրկութեան գիտութիւնը։ Սհա այն համարը. «Այս բաները զրեցի ձեզ՝ Աստուծոյ Որդու անունին հաւատացեաներիդ, որ գիտենաք թէ յաւիտենական կեանք ունիք»։ (Համար 13)։ Լաւ ուշադրութիւն դարձրէք, որ այստեղ չի ասում թէ «Ես տուել եմ ձեզ այդ երջանիկ զգացմունքները. որ զիտենաք թէ յաւիտենական կեանք ունիք»։

Եփիպտոսի երկրի վրա դատաստանը հասնելու գիշերը՝ ի՞նչ գիտէին հսրայէլացիների առաջինեկ որդիները թէ իրանք բոլորովին ապահով էին հրեշտակի սուրիցը, որ կոտորում էր առաջինեկներին։ Այցելենք հողով հսրայէլացիների երկու առներ և տեսնենք թէ ինչ են ասում այն առների բնակիչները։

Առաջի տունը որ մտնում ենք, իսկոյն նըկատում ենք, թէ այստեղ ամենքն էլ ահ ու

գողի մէջ՝ սպասում են մի ինչ որ բանի՝ լարւած ուշագրութիւնով։ Ծնողները և նըանց որդիները միասին կանգնած են այստեղ՝ գողողակով երեսների գոյնը թռած։ Մենք հարցնում ենք նրանց վախի պատճառը։ Երեց որդին պատմում է մեզ, թէ մահի հրեշտակը նոյն գիշերը պիտի անցնէ այն երկրով և կոտորէ ամեն առաջինեկներին, և նա հիմա հաստատ չը զիտէ, թէ արդեօք ինքը պիտի պըճնէ այն կոտորածից թէ ոչ։ Նա ասում էր. «Երբ հրեշտակը անցած կինի իմ ծնողների տանը մօտով և օրը բացւած կինի, այն ժամանակ կիմանամ, որ ազաւած եմ, բայց մինչ այն՝ ևս հաստատ չը զիտեմ։ Իսկ մեր հարեանի տանը ասում են, թէ իրանք բոլորովին վստահ են և հաստատ զիտեն, որ ազաւ կը մնան կոտորածից. սակայն գա մենք համարում ենք ամենամեծ յանդզնութիւն։ Ինձ մնում է միայն մի բան. հսկել և արթուն մնալ այդ ամբողջ սարսափելի գիշերը և ունենալ ամենալաւ յօյսեր»։

«Բայց միթէ իսրայէլի Աստուծը ցոյց չի տւել ազաւութեան մի ճանապարհ Իր ժողովրդին», հարցնում ենք մենք։

«Այո, ցոյց է տւել», պատասխանում է նա, «և մենք հետեւել ենք այդ ճանապարհին։ Նրա խօսքի համեմատ մենք մորթել ենք «մէկ

անարատ գառը մէկ տարեկան։ և նրա արիւնից առել և քսել ենք զոպայի փունջով գոների երկու կողմին և նոյնպէս էլ վերի սեմին. սակայն և այնպէս հաստատ չը գիտենք, թէ արդեօր սա խսկապէս կը պաշտպանէ մեզ թէ ոչ»։

Հիմա թողնենք այդ երկմիտ և անհանգիստ մարդկանց և գնանք, ներս մտնենք նրանց հարեանի տունը։ Ի՞նչ մեծ աարբերութիւն։ Խողագութիւնը և հանգստութիւնը երեսում է ամենի երեսների վրա։ Տան բնակիչները կանգնած են այստեղ, գօտիները կապած, ցուպերը ձեռքներին և ուտում են գառի խորոված միս։ Ի՞նչ է պատճառը, որ նրանք այնպէս հանդիսան են այդ սարսափելի զիշերը։ Մենք հարցնում ենք, թէ ի՞նչու նրանք այդպէս հագնւած ու պատրաստ կամնգնել են հացի սեղանի մօտ, և նրանք պատասխանում են։ «Մենք սպասում ենք Եհովայի հրամանին, որ գուրս գանք այստեղից։ Ի՞նց որ հրամանը լինի, մենք հրաժեշտ կը տանք ընդ միշտ եգիպտոսի անգութ վերակացուներին և անտանելի զերութեանը և ազատ կը լինենք»։

«Բայց միթէ դուք մոռացել էք, որ այս զիշերը դատաստանի զիշեր է»։

«Ոչ, մենք լաւ զիտենք այդ, բայց մեր առաջինեկը բոլորովին ապահով է, որովհետեւ Աստուծոյ կարգադրութեան պէս՝ մենք քսել ենք արիւնը դոնին»։

«Զեր հարեանի տանը նոյնպէս քսել են արիւնը», ասում ենք մենք, «բայց և այնպէս այնտեղ ամենքն էլ չափազանց անհանգիստ են, որովհետեւ վատահ չեն թէ իրանց առաջինեկը ազատ կը մնա կոտորածից»։

Այդ բոպէին լսում է անդրանիկ որդու ձայնը։ Նա ասում է հաստատապէս։ «Մենք ունինք ոչ միայն արիւնը, այլ և Աստուծոյ հաստատ խօսքը, որ նա ասել է արեան մասին։ «Երբոր արիւնը տեսնեմ, ձեր վրայից պիտի անցնեմ»։ Աստուծած տեսնում է արիւնը մեր դռնի վրա դրսից և բաւականացած ու հանգստացած ենք Աստուծոյ խօսքով։ Նա անշուշտ կը պահէ իր խօսքը»։


Այդպէս է բանը, սիրելի ընթերցող։ Գատի արիւնը, որ հեզզել է մեզ համար, փրկում է, և Աստուծոյ բերանից գուրս եկած խօսքը տալիս է մեզ անխախտելի վստահութիւն։ Ի՞նչը կարող է մեզ աւելի ապահով դարձնել գատաստանից, բացի Քրիստոսի արիւնից։ Ի՞նչ բան կարող է աւելի վստահութիւն տալ մեզ, բացի Աստուծոյ հաստատ խօսքից։ Ոչ մի բան։ Ո՞րն էր աւելի ապահով դրութեան մէջ այն երկու տներից, առաջինը թէ երկրորդը։ Կարելի է գու կարծում ես թէ երկրորդը, որովհետեւ այն-

տեղ ամենքն էլ հանգիստ ու խաղաղ էին: Աշ, այդպէս չէ, երկուսն էլ հաստատապէս ապահով էին: Նրանց ապահովութիւնը կախւած չէր իրանց ներսում ունեցած զգացմունքներից, այլ կախւած էր այն բանից, թէ ինչպէս էր նայում Աստուած դրսում սրսկւած արեան վրա: Եւ եթէ դու ևս կամենում ես վստահ լինել քո փրկութեան վերաբերեալ, պէտք չէ որ ականջ դնես քո ներքին զգացմունքների աստանվող վկայութեանը, այլ պէտք է ուշազրութեան առնես Աստուծոյ խօսքի անսխալ վկայութիւնը: «Ճշմարիսն ճշմարիսն ասում եմ ձեզ, թէ իմ խօսքիս լսողը, և ինձ ուղարկողին հաւատացողը, յաւիտենական կեանք ունի, և դատաստան չի մտնել»: (Յովհ. Է, 24):

Մի օրինակ բերեմ քեզ համար առօրեակեանքից: Մի գիւղացի լսել էր, որ հարուստ հողատէրը մտաղիր էր վարձի տալ՝ իր տան մօտ գտնվող գեղեցիկ արօտատեղը: Վաղբւց ի վեր էր նա ցանկացել էր ձեռ բերել այն արօտատեղը, որովհետև բաւական խոտ չուներ իր կենդանիների համար: Նա գրել էր այդ մասին մի նամակ հողատիրոջը, և չէր ստացել պատասխանը, թէկ նամակը գրելուց յետոյ անցել էր բաւական ժամանակ: Մի օր այցելեց նրան իր հարկանը, որին պատմեց նա բոլոր եղելութիւնը:

Հարեանը ականջ դրաւ ուշազրութեամբ և յետոյ տաեց: «Ես հաստատ համոզւած եմ, որ հոգատէրը կը տայ քեզ այն արօտատեղը: Զիս յիշում, թէ ինչպէս նա մօտ ժամանակում տւաւ քեզ մի գեղեցիկ պարզի և գովեց քո աշխատասէր և ճշտապահ լինելով»: Այդ խօսքերը հաստատ յոյս տւին գիւղացիին և լցրին նրա սիրալը ուրախութիւնով: Եւ հետեւել օրը հանդիպում է գիւղացիին նրա մի ուրիշ հարկանը և խօսակցութեան մէջ ասում: «Ես կարծում եմ թէ չի կարելի յուսալ, որ նա տայ քեզ այն արօտատեղը, որովհետև լսել եմ, թէ պարզն Ա-ն նոյնպէս ցանկանում է ձեռ բերել այն և դու գիտես, թէ հողատէրը շատ է սիրում այն մարդին և համարեա թէ ամեն օր այցելում է նրան»: Գիւղացին հէնց որ լսեց այդ խօսքերը, նրա յոյսերը բաւական պակասեցին: Տխուր ու արտում վերագանում է նա իր տունը:

Հէնց որ նա տուն է համառում, նամակներ ցրողը բերում է յանձնում նրան իր նամակի ցանկալի պատասխանը: Գիւղացին նայում է նամակին և խկոյն ճանաչում է, թէ ձեռագիրը հողատիրոջն է: Յուղւած բաց է տնում նամակը, կարգում է, և կամաց կամաց մկում է փայլել նրա երեալ. նրա սպասողական երկիւղալից գըրութիւնը և հոգու ակի են տալիս չափազանց



ուրախութեան։ Նամակը բարձր բռնած, ուրախ ուրախ ասում է իր կնոջը. «Հիմա ամեն ինչ հաստատվեց. հողատէրը գրում է թէ նա տալիս է ինձ արօտատեղը, որքան ժամանակով որ ցանկանամ, և ամենաձեռնուր պայմաններով։ Զուր էին իմ ամեն վախերը։ Հիմա ով ուզում է թող գայ—այլես վախ չունիմ, որովհետեւ ես ունիմ նրա խօսքը և դա բաւական է ինձ։

Ո՞հ, քանի քանի հաւատացեալներ գտնուում են ճիշտ այդ դրութեան մէջ, ինչպէս և այն գիւղացին—նրանք տատանվում են այս ու այն կողմը, լսելով մարդկանց կարծիքները, կամ թէ հէնց նայելով իրանց խարէական սրախ խորհուրդներին և զգացմունքներին։ Աստուծոյ անսփառ և անսուտն խօսքի ընդունելը միայն կարող է հանգիստ տալ մարդուս և ապատել նրան ամեն երկմատութիւններից և վախերից։ Աստուծոյ խօսածը հաստատ է, թէ նա խօսէր ամբարշտի գատապարտութեան և թէ հաւատացեալի փրկութեան վերաբերեալ։ «Ով Տէր, քո խօսքը յաւիտեան հաստատ է երկնքումը» (Սաղմ. ճժթ, 89)։ Նրա խօսքը կարգադրում է ամեն ինչ՝ հաւատացեալի համար։ «Աստուծ մարդ չէ, որ սուտ խօսէ, ոչ էլ մարդի որդի, որ զղջայ. միթէ կ'ասէ, և չի անիլ կամ կ'խօսէ, և չի կանգնեցնել»։ (Թուոց իդ, 19):

Գուցէ գարձեալ հարցնես, թէ ի՞պէսն չիմանամ, որ իմ հաւատը ուղիղ տեսակից է։ Միայն մէկ պատասխան կայ այդ հարցին. «Արգե՞օք ուղիղ անձնաւորութեան վրա է քո հաւատաքդ թէ ոչ հաւատում և ապաւինում ես Աստուծոյ օրհնեալ Որդուն»։ Խնդիրը շի վերաբերում քո հաւատքի մեծութեանը, այլ վերաբերում է այն անձի արժանահաւատ լինելուն, որին դու ապաւինում ես։ Մէկը բռնում է Քրիստոսին՝ խեղդվողի պէս, իսկ միւսը սիրա է անում մօտենալ Նրան միայն ետեի կողմից և գալչել նրա հանգերձի ծայրին։ Դրանով շի կարելի ասել, թէ առաջինը աւելի ապահով է վերջնից։ Նրանք երկուան էլ գիտէին, թէ իրանք չեն կարող դնել իրանց անձի վրա ամենափոքր յոյս անգամ, բայց կարող են հանգիստ ապաւինել Քրիստոսին և նրա գործին և հանգչել նրա կատարած գործում։ Անա գա է հաւատքը։ «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ինձ հաւատացողը յաւիտեանական կեանք ունի»։ (Յովհ. զ, 47)։ Յիսուսի վրա ունեցած ամենատկար հաւատքը փրկում է մեղաւորին ընդ միջա, մինչդեռ դէպի կորուսան է տանում՝ Նրանից գուրս զըտնվող բաների վրա ունեցած ամենագօրաւոր հաւատքն անգամ, թէկուզ լինեն այդ բաները բարի գործեր, կրօնական արարողութիւններ, քաղ-

ցըր զգացումներ, կամ սրանց նման այլ բաներ։  
Մենք կարսղ ենք ճշմարտապէս ապավինել  
Նրան։ Նա է այն սիրելի Որդին, որին հաւանել  
է Աստուած և Նա մտաւ դատաստան մեղառորի  
տեղակ և քաշեց մեղքի դէմ եղած Աստուածա-  
յին բարկութեան ամբողջ զայրոյթը։

Բայց ի՞նչ խորամանկ է մարդկային սիր-  
ար։ Մօտ ժամանակում մի աղջիկ ասաց ինձ.  
«Ես ճշմարխու հաւատում եմ Տէր Յիսուսին,  
բայց երբ հարցնում են ինձանից, թէ արդեօք  
փրկւած եմ ես, չեմ կամենում ասել «այս»,  
որովհետեւ վախենում եմ որ սուտ լինի»։ Այն  
աղջիկ հայրը մսավաճառ էր։ Պատահաբար այն  
օրը շուկայի օր էր և նրա հայրը գնացել էր  
ոչխարիներ զնելու։ Այդ հանգամանքից օդավե-  
րով ես ասեցի. «Ենթագրենք, թէ ձեր հայրը վե-  
րադարձել է տուն և դուք հարցնում էք նը-  
րանից, թէ նա քանի ոչխար է զնել. նա պա-  
տասխանում է թէ «տասը»։ Քիչ յետոյ գալիս  
է մի անձանոթ մարդ, մտնում է խանութ և  
հարցնում ձեղանից. «Այսօր քանի ոչխար է զը-  
նել ձեր հայրը», և դուք պատասխանէք նըրան  
և տսէք. «Իմ հայրը ասում է՝ տասը, բայց ես  
չեմ կամենում հաստատ ասել, վախենում եմ որ  
սուտ լինի»։ Ի՞նչ անուն պէտք է տալ ձեր այդ  
վարմունքին։

«Դրանով նա ստախօս արած կը լինէր իր  
հօրը», ասեց աղջկայ մայրը, որ նստած ականջ  
էր գնում մեր խօսակցութեամբ։

«Չեր մայրը իրաւունք ունի», նկատեցի  
ես. «Դուք ստախօս կ'անէիք ձեր հօրը. նոյն-  
պէս էլ վարւում էք Տէր Յիսուսի նկատմամբ,  
թէկ դա անում էք չը կամենալով և չը զիտե-  
նալով։ Դուք ասում էք. «Ես հաւատում եմ Աս-  
տուծոյ Որդուն, և Նա ինձ ասում է, թէ հա-  
ւատալով Նրան՝ ես ունիմ յաւիտենական կեանք.  
բայց ես չեմ կամենում ասել թէ յաւիտենա-  
կան կեանք ունիմ, վախենալով, որ սուտ լինի։  
Ուրեմն դուք ստախօս էք անում Տէր Յիսուսին։  
Սարսափելի է»։

Դարձեալ ուրիշները հարցնում են. «Ի՞նչ-  
պէս իմանամ, որ ես ճշմարտապէս հաւատում  
եմ։ Ես շատ անգամեր աշխատել եմ հաւատա-  
լու, և յետոյ նայել եմ տեսնեմ, թէ արդեօք  
ճշմարխու հաւատք կայ ինձանում։ բայց որքան  
աւելի եմ նայում իմ հաւատքին, նոյնքան պա-  
կաս է երկում նա»։ Ո՞հ, շատ շատերն են նա-  
յում այդպէս սխալ կողմեր և զուր ջանքեր ա-  
նում, որպէս զի հաւատան և հէնց զրանով ցոյց  
են տալիս, թէ իրանք գտնուում են սխալ ձա-  
նապարհում։ Դարձեալ կամենում եմ առօրեա  
կեանքից վերցրած մի հասարակ օրինակով պար-  
զել և այդ դժւարութիւնը։

Ասենք թէ մի երեկոյ հանգիստ նստած ես  
քո սենեակիդ մէջ։ Յանկարծ թակում են սե-  
նեակի դուռը, բաց ես անում, և սենեակն է  
մտնում մի մարդ, որ այնքան էլ արժանահա-  
ւատ մարդ չէ։ Նա պատմում է թէ աղէտ է  
պատահել քաղաքի մէջ և քաղաքապետը սպան-  
վել է։ Հաւատում ես այն մարդին, կամ թէ  
աշխատում ես հաւատալու նրան։

«Ոչ, կ'ասես դու։—Բայց ի՞նչու համար  
ոչ։ Միթէ այն պատճառով, որ դու նայում ես  
քո հաւատքին կամ քո զգացմունքներին։ Ոչ,  
այլ որովհետեւ դու զիտես որ այն լուրը հա-  
դորդող մարդը ստախօս է։

Մի քանի րոպէ յետոյ այցելում է քեզ քո  
մի հարևանդ, որ շատ ժամանակ առաջ մի ան-  
գամ խարել է քեզ։ Նա տում է։ «Լսել էք  
մարդէն, որ քաղաքապետին փորձանք է պատա-  
հել և նա խկոյն տեղն ու տեղը մեռել է»։—  
Դու դարձեալ չը զիտես։ Ծնդունել այդ լուրը  
իբրև ճշմարիտ թէ ոչ, որովհետեւ այն մարդի  
վրա էլ չունես կատարեալ վատահութիւն։ Բայց  
հէնց որ նա հեռանում է քո մօտից, մտնում է  
սենեակը քո ամենալաւ բարեկամդ և կրկնում  
է նոյն լուրը, որ ասեցին քեզ առաջի երկու  
մարդիկը։ «Հիմա ես հաւատում եմ», տում ես  
դու, որովհետեւ այս իմ բարեկամը ոչ մի ժա-

մանակ չի խարել ինձ և հաւատում եմ որ նա  
երբէք չի խարի»։ Եւ ես դարձեալ ասում եմ քեզ։  
ի՞նչու ես հիմա հաւատում։ Միթէ հաւատում  
ես այն պատճառով, որ տեսնում ես ուղիղ բզ-  
գացմունքներ քեզնում։ Ոչ, այդպէս չէ, այլ դու  
հաւատում ես, որովհետեւ քո բարեկամդ արժա-  
նահաւատ մարդ է։ Այդպէս է և բարի լուրը,  
որ Աստուած հաղորդում է ինձ իր խօսքի մէջ։  
Ես հաւատում եմ այդ բարի լուրին, որովհետեւ  
այդ լուրը ինձ համար բերողը չի կարող սուտ  
ասել, որովհետեւ նա արժանի է, որ ես ամբող-  
ջովին և անպայման կերպով հաւատամ նրան։  
Ես ոչ թէ նայում եմ իմ հաւատքին, այլ ինձ  
հետ խօսողին։ Ես մաիկ եմ անում նրան և ա-  
սում «Այս, նա արժանի է, որ ես բոլորովին  
ապաւինեմ նրան։ Նա սուտ չի խօսիլ—նա կը  
կատարէ իր խօսքը»։ «Եթէ մարդկանց վկայու-  
թիւնն ընդունում ենք, Աստուծոյ վկայութիւնն  
աւելի մէծ է, որովհետեւ սա է Աստուծոյ վկա-  
յութիւնն, որ վկայեց իր Որդու մասին։ Ով որ  
հաւատում է Աստուծոյ Որդուն, վկայութիւնն  
ունի իր անձումը։ ով որ չէ հաւատում Աստու-  
ծուն, ստախօս է արել նրան, որովհետեւ չ'հա-  
ւատաց այն վկայութեանն, որ Աստուած վկա-  
յեց իր Որդու մասին»։ (Ա. Յովհ. ե, 9, 10)։  
«Աբրահամը հաւատաց Աստուծուն, և արդարու-

թիւն համարուեցաւ նրան»։ (Հոռմ. դ, 3):

Եւ այդպէս՝ շատ մարդիկ հաւատքը համարում են աննկարազբելի մի բան, և կամենում են զգալ այդ իրանցում, որով յետոյ վստահ լինեն, թէ իրանք յարմար են երկինքի համար։ Բայց հաւատքը բոլորովին այդ չէ։ Ճշմարիտ հաւատքը նայում է զէպի գուրս, նայում է կենդանի մի Անձնի Քրիստոսին և Նրա կատարած գործին և հանգիստ լսում է Աստուծոյ տւած վկայութիւնը, այն Աստուծոյ, Որ Ինքն է ճշմարառութիւնը և լոյսը։ Եւ այդ գուրս նայեն է, որ տալիս է մարդին ներքին խաղաղութիւն։ Երբ ես դարձնում եմ երեսս արեգակին, իմ շուագս մնում է ետևումս և ես չեմ տեսնում։ Նոյնպէս էլ անկարելի է նայել փառաւորւած Քրիստոսին երկնքումը և միենոյն ժամանակ նայել իր անձնին։

Եւ այդպէս տեսնում եմ, որ Աստուծոյ Որդու Օքնեալ Անձնաւորութիւնը արժանի է իմ ապաւինութեան։ Նրա կատարած գործը տուիս է ինձ յաւիտենական ապահովութիւն, և Աստուծոյ խօսքը տալիս է ինձ հաստատ վստահութիւն իմ փրկութեան վերաբերեալ։ Փրկութեան ճանապարհը գտնում եմ ես Քրիստոսում և Նրա գործում, և փրկութեան գիտութիւնը գտնում եմ Աստուծոյ խօսքում։

Բայց ի՞նչ է պատճառը, որ նոյնիսկ փըրկութեան վստահութիւն ունեցող մարդիկ շատ անզամ կորցնում են իրանց փրկութեան ուրախութիւնը և այնպէս թշւառ գրութեան մէջ են լինում, ինչպէս իրանց գարձի գալուց առաջ, կամ մինչև անզամ աւելի թշւառ։ Այդ հարցը տանում է մեզ մեր խորհրդածութեան երրորդ մասին։

Մենք գտնում ենք Աստուծոյ խօսքի մէջ, որ մենք փրկուում ենք Քրիստոսի գործով, վըստահութիւն ենք ստանում Աստուծոյ խօսքով, իսկ փրկութեան վայելքը, մեր ուրախութիւնը և մեր մխիթարութիւնը շարունակ պահպում են Սուրբ Հոգով, Որ բնակւում է ամեն մի փրկված մարդում։ Բայց դա ես չը մոռանանք, որ իւրաքանչիւր հաւատացեալում կայ նոյնպէս «մարմինը», այսինքն չար բնութիւնը, որով նա ծնվել է և որը սկսել է երեալ տակաւին իր մօր գրկում կաթնակեր մամուկ եղած ժամանակից արդէն։ Սուրբ Հոգին հաւատացեալում հակասակում է մարմնին, և մարմնի ամեն խօրհուրդները, խօսքերը կամ գործերը արտմեցնում են Հոգուն։ Երբ քրիստոնեան «Տիրոջը վայել» կեանք է վարում, Սուրբ Հոգին առաջ է բերում նրանում իր օքնեալ պատվները. «Սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմատութիւն, քաղցրութիւն և այն» (Գաղ. ե, 22)։ Իսկ երբ նա

մարմնաւոր կեանք է վարում, և աշխարհի ընթացքով գնում, Հոգին արամում է և այն պառազներն էլ չքանում են, կամ թէ քիչ թէ շատ պակասում են:

Ի՞նչպէս սերտ կապւած են իրար հետ Քըրիստոսի գործը և մեր փրկութիւնը, նոյնպէս էլ կապւած են իրար հետ մեր վարքը և մեր վայելքը կամ ուրախութիւնը: Գոհութիւն լինի Աստուծուն, որ Քըրիստոսի գործը երբէք չի կարող ոչնչանալ և ոչ էլ իր նշանակութիւնը կորցնել: Նա յաւիտեան մնում է, և նրա հետ մնում է նոյնպէս էլ մեր փրկութիւնը: Բայց ուրիշ է մեր վարքը, դա կարող է վար ընկնել, այսինքն չը համապատասխանել մեր գործեանը և կոչումին, և այն ժամանակ անշուշտ կը չըքանայ և մեր ուրախութիւնը: Իմ հոգեսր ուրախութիւնս միշտ համապատասխան կլինի՝ դարձի գալուց յետոյ ունեցած իմ վարքին: Առաջի քրիստոնեաների մասին գրված է Գործք առաքելոց թ, 31. «Երանք Տիրոջ երկիւղին հետեւում էին և Սուրբ Հոգու միմիթարութեամբը շատանում», և Գործ. ժգ, 52. «Եւ աշակերտները լցում էին ուրախութիւնով և Սուրբ Հոգով»:

Ուրեմն մեր ապահովութիւնը կախւած է Քըրիստոսի մեղ համար կատարած գործից, մեր վստահութիւնը հիմնած է Աստուծոյ խօսքի

վրա, որ նա խօսել է մեզ հետ և վերջապէս մեր վայելքը կախում ունի այն հանգամանքից, թէ արդեօք չենք արամեցնում մեղնում ընակւող Սուրբ Հոգուն: Բայց ոչ մի ժամանակ պէտք չէ շփոթել մեր ապահովութիւնը և վստահութիւնը մեր վայելքի կամ ուրախութեան հետ: Երբ մենք՝ Աստուծոյ որդիներս որևէ է մի բանով արամեցնում ենք Սուրբ Հոգուն, իսկոյն խափանվում է մեր գործնական հաղորդակցութիւնը Հօրը հետ և Որդու հետ և մնում է խափանված, մինչեւ որ ինքներս մեզ դատապարտենք և մեր մեղքերը խոստովանենք, որից յետոյ գարձեալ ետ ենք ստանում հաղորդութեան ուրախութիւնը: Օրինակ, երբ մի որդի յանցանք է գործում, նա արամում է և չի վայելում գործնականապէս իր հօր սէրը և հաղորդակցութիւնը, մինչեւ որ խոստովանում է իր արած չարութիւնը և յայնում այդ առթիւ ունեցած իր ցաւը: Բայց նա մնում է որդի, որովհետեւ նա ծնվել է որդի, և դա գործ չունի նրա վարքի հետ: Երբ Դաւիթը մեծ յանցանք գործեց Ուրիայի կոոջ հետ և յետոյ ճանաչեց իր մեղքը, նա չ'ասաց իր աղօթքի մէջ. «Դարձեալ տուր ինձ քո փըրկութիւնը», այլ ասաց. «Դարձեալ տուր ինձ քո փըրկութիւնը»: (Սաղմ. ծա, 12): Այդպէս է և հաւասացեալի գրութիւնը:

Հէնց որ նա մեղանչում է, հաղորդութիւնը ընդհատում է և նրա ուրախութիւնը խափանւում է, մինչև որ «փշրւած ու կորրւած սրառվ» գալիս է Հօր մօտ և խոստովանում իր մեղքը: Եւ վրատահութիւն է ստանում, թէ իր մեղքը թողւած է, որովհետև Աստուծոյ խօսքը պարզ ու որոշ ասում է. «Եթէ մեր մեղքերը խոստովանենք, նա հաւատարիմ է և արդար որ մեր մեղքերը թողէ մեզ, և սրբէ մեզ ամեն անիրաւութիւնից»: (Ա. Յովհ. ա. 9): Ո՞հ թէ Աստուծոյ թանկագին որդիներից ոչ մէկը չը մոռանար, թէ չը կայ աւելի ամուր մի կապ, քան թէ այն, որ ունի Աստուծոյ զաւակը իր Աստուծոյ և իր Հօր հետ, բայց միւս կողմից՝ չը կայ աւելի նուրբ մի կապ, քան թէ հաղորդակցութեան կապը: Զը կայ մի ուժ երկրի վրա կամ գմոխում, որ կարողանար իրեւ առաջի կապը, այն ինչ մի հատիկ մեղանչական մտածմունք, մի հատ պարապ խօսք անպատճառ կտրում է երկրորդ կապը:

Ուրեմն եթէ անզգոյց գտնվելով զրկվել ենք հաղորդութեան վայելքից, որ ունէինք մեր Աստուծոյ և Հօրը և Նրա Որդի Յիսուս Քրիստոսի հետ, ապա կանգ առնենք, և մեր սիրար դարձնենք մեր ձանապարհին: Եւ երբ գտնենք այն գողին, որը յափշտակել է մեզնից մեր ուրախութիւնը և մեր խաղաղութիւնը, իսկոյն բերենք նրան լուսոյ մէջ. խոստովանենք մեր մեղ-

քը մեր Հօր առաջին և անխնայաբար դատաստանի մանսենք ինքնսերս մեզ հետ, թէ ինչու մենք անզգոյց և անտարբեր զանվեցանք և թոյլ տուինք որ գողը ներս մտնէ: Զը կարծենք թէ հաւատացեալի մեղքը Աստուծոյ առաջին անդարձի մեղքից պակաս զգւելի է: Աստուծած միշտ նոյն աշխով է նայում մեղքին: Ինչպէս Աստուծած չի կարող լուսութեամբ սնցնել իր սիրելի Որդուն արհամարհող մարդի մեղքից, նոյնպէս էլ նա չի կարող սնցնել և հաւատացեալի մեղքից: Թէ և այդ երկու անձնաւորութիւնների մէջ կայ տարբերութիւն: Հաւատացեալի մեղքերը ամենն էլ առաջուց յայտնի էին Աստուծուն և ամենն էլ զրվեցին Աստուծոյ Գառի վրա, երբ նա կախւած էր խաչի վրա Գողգոթայում: Այնտեղ մի անգամ ընդ միշտ կարգի բերվեցաւ մեր մեղքերի ինզիրը, մեր մեղքերի պատիմը զրվեցաւ Գառի սուրբ և անարատ զիմի վրա, նա «Ինքն մեր մեղքերն իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց»: (Ա. Պետր. Բ, 24): Մինչ զեռ Քրիստոսին մերժող մարդք պէտք է ինքը յաւիտեան կրէ իր մեղքերը կրշակի լիճի մէջ: Ուրեմն երբ փրկւածը մեղանչում է, հարցը չի վերաբերում դատաստանին, այլ վերաբերում է հաղորդակցութեան, և դա լինում է ամեն անգամ, երբ նա արտմեցնում է


**Սուրբ Հոգուն.** և եթէ չը նայած իր խղճի յանդիմանութիւններին և **Սուրբ Հոգու** ձայնին, որ միշտ նրա մէջ խօսում է, հաւատացեալը շարունակէ շար ճանապարհը, Հայրը կը խրատէ նրան: Նա կը դատի այստեղ երկրի վրա, ինչպէս Պօղոսը զրում է Կորնթացիներին. «Բայց դատուելով Տէրիցը խրատվում ենք, որ աշխարհքի հետ չը դատապարտուինք»: (Ա. Կոր. ժա, 32):

Բայց դարձեալ կրկնում եմ, որ թէկ հաւատացեալը անհաւատարիմ գտնվի և հետեւբար Աստուած ստիպված լինի խիստ խօսել նրա հետ, սակայն և այնպէս այդ հանգամանքումն էլ ոչ մի կերպով չի շահափում փըրկութեան խնդիրը: Եթէ ես արթուն չեմ կենում և անհաւատարիմ եմ գտնվում, իհարկէ դրանով ձնշվում և անհանգիստ է լինում իմ սիրտս, ինչքը ինձ անբախտ եմ զգում, բայց Քրիստոսի կատարած գործը և Աստուծոյ խօսքը մնում են անփոփոխ: Միայն թէ փոխվում է Սուրբ Հոգու զործունէութիւնը: Փոխանակ առնելու Քրիստոսի փառաւոր բաներից և իմ սիրտս լցնելու նրա գերազանցութեան և գեղեցկութեան զիտակցութիւնով և վայելքով, նա տրամում է և ստիպված է լինում զբաղվել իմ մեղքով ու անհաւատարմութիւնով, որպէս զի իմացնի և զգալ տայ ինձ իմ ցաւալի դրութիւնը: Եւ Հայրը, փոխա-

նակ վայելել տալու ինձ իր քաղցր հաղորդակցութիւնը, տեսնելով ինձ մեղքի մէջ, ստիպված է լինում խրատել և խօսել ինձ հետ հէնց իմ անձի վրայով: Ո՞հ, ինչ անշափելի կորուստ է սա: Ո՞հ թէ Տէրը մեզ օրէց օր արթուն և նախանձաւոր անի մեր անձնի նկատմամբ, որ չը տրբամեցնենք Աստուծոյ Սուրբ Հոգուն, որով կնքուեցանք փրկութեան օրուայ համար: (Եփես. դ, 30):

Օրհնեալ լինի մեր սիրելի Տէրը, որ Նա միշտ մնում է անփոփոխ թէ իր շնորհքով և թէ քաղցրութիւնով: «Յիսուս Քրիստոսը նոյնն է երեկ և այսօր և յաւիտեան»: (Եփ. ժգ, 8): Եւ նրա զործն էլ երբէք չի փոխւի: «Իմացել եմ, որ ամեն ինչ որ Աստուած անում է, այն յաւիտենական է, նրա վրա չի աւելացնուիլ, և նըրբանից չի պակասացնուիլ»: (Ժողով. գ, 14): Եւ նրա խօսքն էլ երբէք չի տատանւիլ: «Ամեն մարմին խոտի պէս է, և մարդի ամեն փառքը խոտի ծաղիկի պէս. խոտը չորացաւ և նրա ծաղիկը թափուեցաւ: Իսկ Տէրոջ խօսքը մնում է յաւիտեան»: (Ա. Պետր. ա, 24, 25): Դա մեզ տալիս է հանգիստ ի գիմաց մեր տկարութեան: Իմ ապավինութեան առարկան, իմ փրկութեան և իմ յաւետենական ապահովութեան և վատհութեան հիմքը—այդ ամենը նոյնպէս անփոփոխ և անխափանելի են, ինչպէս Աստուած ինքնն է անփոփոխ:

Այդպէս մեծ շնորհք որ մեզ եղել է և որ  
մեր փրկութիւնը Նրանում յաւիտեանս յաւիտե-  
նից հաստատւած է, մի՞թէ այդ գիտակցութիւնը  
կը թուլացնի և անտարբեր կ'անի մեզ: Ոչ մի  
ժամանակ: Եթէ մէկի մէջ կայ այդպէս ժաման-  
մունք, դա ցոյց է տալիս նրա սրաի վերին առ-  
տիճանի ցաւալի գրութիւնը, որ Աստուծոյ շը-  
նորհքը և այն աղատութիւնը որի մէջ նա մեզ  
մտցրել է, գործ է ածում իբրև առիթ մարմնի  
համար: Արդեօք պէտք է առել, թէ ինչ սար-  
ափելի բան է այդ: Տէրը տայ մեզ իր շնորհ-  
քով, որ մեր վարքը համապատասխան լինի այն  
կոչումին, որով մենք կանչված ենք: Ո՞հ թէ  
մենք վախենայինք մեղքից, և վախենայինք ինք-  
ներս մեղնից և միենոյն ժամանակ Աստուծոյ  
ձշմարիա վախը լինէր մեր սրաերի մէջ: Զը մո-  
ռանանք որ մենք Հայր ենք ասում Նրան, Արք  
լոյս է և որ առանց աշառութեան դատում է ա-  
մեն մէկին իր գործի համեմատ: «Եթէ ասենք  
թէ հազորդութիւն ունինք Նրա հետ, և խաւա-  
րի մէջ ման գանք, սուտ ենք ասում և ձրշ-  
մարտութիւնը չենք անում: Յայց Եթէ լոյսի  
մէջ ման գանք ինչպէս նա է լոյսի մէջ, հա-  
զորդութիւն ունինք իրար հետ, և նորա Որդի  
Յիսուս Քրիստոսի արխւնը մեզ որբում է ամեն  
մեղքից»: (Ա. Յովհ, առ. 6. 2):



~~ՀԱՐՄ~~  
H2-5521<sub>a</sub>

**ԳԻՆԸ 5 ԿՈՊ.**

«Յարի Լուր» յրիստոնեական թերթը հրատարակվում է ամիսով երկու անգամ։ Տարեկան բաժանուղագիւնն է 2 ռուբլի։ Հասցեն. Բակու. Редакция „Барн Луръ“